ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Անձանց միջպետական հետախուզման մասին ԱՊՀ մասնակից պետությունների՝ 2010 թվականի դեկտեմբերի 10-ի պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրության ստորագրման նպատակահարմարության մասին

«ԱՊՀ մասնակից պետությունների անձանց միջպետական հետախուզման մասին» Պայմանագիրը ստորագրվել է 2010 թվականի դեկտեմբերի 10-ին:

Անդրազգային հանցավորության դեմ պայքարի արդյունավետության բարձրացման, ԱՊՀ մասնակից պետությունների իրավասու մարմինների, ինչպես նաև անվտանգության և իրավակարգի ոլորտում գործող ԱՊՀ ոլորտային մարմինների միջև տեղեկատվության փոխանակման առկա մեխանիզմների կատարելագործման և տեղեկատվական փոխգործակցության ամրապնդման նպատակով՝ «Անձանց միջպետական հետախուզման մասին Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների՝ 2010 թվականի դեկտեմբերի 10-ի պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրության նախագիծը լրամշակվել է ԱՊՀ մասնակից պետությունների իրավասու մարմինների փորձագիտական խմբի կողմից՝ առցանց ձևաչափով կայացած հանդիպումների ընթացքում:

Արձանագրության ստորագրմամբ ենթադրվում է անդրազգային հանցավորության դեմ պայքարի բնագավառում ԱՊՀ մասնակից պետությունների իրավասու մարմինների, ինչպես նաև անվտանգության և իրավակարգի ոլորտում գործող ԱՊՀ ճյուղային մարմինների միջև տեղեկատվության փոխանակման առկա մեխանիզմների կատարելագործում:

Արձանագրության ստորագրումը զգալի կերպով կբարձրացնի քրեական հետախուզման մեջ գտնվող անձանց հայտնաբերման և ձերբակալման ուղղությամբ տարվող աշխատանքներում համատեղ ուժերի օպերատիվությունը և արդյունավետությունը:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ ներքին գործերի նախարարությունը «Անձանց միջպետական հետախուզման մասին ԱՊՀ մասնակից պետությունների՝ 2010 թվականի դեկտեմբերի 10-ի պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրության ստորագրումը գտնում է նպատակահարմար:

ՀՀ ներքին գործերի նախարարի տեղակալ ***Արփինե Սարգսյան***